

Ի դէմս Արշակ Յարութիւնեանի հայ բեմը կորցնում է մեր տա-
ղանդաւոր դերասաններից մէկին, որ երկար տարիներ ծառայել է
հայ թատրոնի բարդաւաճման:

ՄԻՔԱՅԷԼ ՄԻՆԱՍԵԱՆ

Օգոստոս 3-ին Բըրքլիի մէջ (Քալիֆ.) վախճանւել է Պրոֆ. Մ.
Մինասեան, ուր ծանօթ էր թէ՛ որպէս կրթական մշակ եւ թէ՛ որպէս
դրչի մարդ: Ննւել էր Խարբերդ, 1865 թ.: Իր ուսումը ստացել էր
Պարտիզակի ամերիկեան բարձրագոյն քոլէջում, որտեղից շրջանա-
ւարտ լինելուց յետոյ, նւիրեց ուսուցչութեան նախ Ադանայի, ապա
Տաբսոնի մէջ: Ուսուցչութեան առաջին իսկ շրջանից սկսեց աշխա-
տակցել Պօլսոյ «Բիւրակն» թերթին:

1897-ին, հրաժարւելով թրքական հայտաւորութիւնից, անցնում
է Ամերիկա եւ մտնում Նէյլի համալսարանը, մասնագիտութիւն ըն-
տրելով քիմիաբանութիւնը: Աւարտելուց յետոյ, 1900-ին անցնում է
Հարվըրտ եւ մի տարի հետեւում է այնտեղի համալսարանի փիլիսո-
փայական դասընթացքներին: Ամերիկայի մէջ գրել սկսում է «Կոչ-
նակ»-ում, որի խմբագրութիւնն է վարում կարճ ժամանակով: Չը
կարողանալով, սակայն, հանդուրժել մի քանի պատելիների ստեղ-
ծած մթնոլորտին՝ թողնում է պաշտօնը եւ 1901-ի վերջերը ձեռնար-
կում «Լոյս» գիտական եւ գրական հանդէսի հրատարակութեան:

Թիւրքիոյ Սահմանադրութիւնից յետոյ վերադառնում է երկիր
եւ Միացեալ Ընկերութեան կողմից կարգւում է նախ դպրոցների
ընդհ. քննիչ եւ ապա՝ տնօրէն Վանի վարժապետանոցին: 1915 թւի
դոյսամարտի ընթացքին իր հմտութիւնը ի սպաս է դնում Վանի Զին-
ւորական մարմնին՝ պատրաստելով ամօժուի վառօդ: Վասպուրականի
նահանջից յետոյ, անցնում է նորից Ամերիկա եւ, բնակութիւն հաս-
տատելով Բոստոնում, վարում է մի քանի տարի «Ազգ» օրաթերթի
խմբագրութիւնը, բայց այս անգամ էլ չի կարողանում ընդհանուր
լեզու գտնել ռամկապարների հետ եւ թողնում է շուտով թերթի խմբ-
ագրութիւնն ու տեղափոխւում Ֆրէզնօ (Քալիֆ.), որտեղ սկսում
է հրատարակել Սիստամ պարբերաթերթը: Յետոյ հաստատւում է
Բըրքլի եւ ամբողջ 12 տարի պաշտօնավարում Քալիֆօրնիայի Համա-
լսարանի փորձնական հաւաքածական ճիւղի մէջ: Այս շրջանում
վերստին սկսում է հրատարակել իր «Լոյս»-ը, այս անգամ նոր ուղ-
ղութեամբ եւ անդերէն լեզուով:

Իր կեանքի վերջին տարիներին նւիրած էր Հայաստանի նախա-

պատմական շրջանի ուսումնասիրութեան եւ այս ուղղութեամբ մի շարք յօդածներ լոյս ընծայեց «Հայրենիք» ամսաթերթի մէջ:

ՊՐՈՖ. ԱՆՏԻԱՆ ՄԷՅԵՆԷ

Սեպտ. 22-ին Փարիզում վախճանւել է յայտնի Պրոֆ. Ա. Մէյէնէ, որ իր հայագիտական աշխատանքներով պատուաւոր տեղ ունի գրաւած հայ մշակոյթի զարգացմանը սատարող գործիչների շարքում:

Մէյէնէն ծնւել է 1866-ին Ֆրանսայի Ալլիէ նահանգի Մուլէն ավանում: Իր նախնական ուսումը ստացել է տեղական վարժարաններում, իսկ բարձրագոյնը՝ Փարիզում: Արեւելեան կենդանի լեզուներ ղպրոցում աշակերտել է հայերէնի ուսուցիչ Կարրիերին եւ 1909-ին ստացել հայերէնագէտի վկայական: 1890-ին գնացել է Վիէննա, որտեղ մասնաւոր դասեր է առել Ֆ. Միլլերից եւ Հ. Յակոբս Տաշեանից: Յետոյ անցել է Թիֆլիզ եւ էջմիածին, տեղւոյն վրա ուսումնասիրելու հայերէն լեզուն: Այս ուղեւորութիւնից վերադառնալով՝ կարգւել է համեմատական լեզաբանութեան ուսուցիչ Փարիզի Բարձր ուսմանց ղպրոցում՝ աւանդելով, ի միջի այլոց, նաեւ հայերէն ձայնաբանութեան դասեր:

Իր ուսուցիչ Կարրիերի մահից յետոյ (1902), յաջորդում է նրան Արեւելեան կենդանի լեզուների ղպրոցի մէջ եւ ընտրւում հայերէնի ուսուցիչ: Այս պաշտօնում նա մնում է երկար տարիներ՝ հասցնելով մի շարք աշակերտներ, որոնցից է եւ պրոֆ. Հրաչեայ Աճառեանը: 1906-ին ուսուցիչ է դառնում Գոլէթ դը Ֆրանսի:

Դասախօսութիւններից ղատ Ա. Մէյէնէն թողել է բազմաթիւ ուսումնասիրութիւններ հնդկաեւրոպական բարբառների ծագման, արեւելեան լեզուների բառակազմութեան ու ստուգաբանութեան եւ լեզաբանական այլ հարցերի մասին: Նրա հայագիտական գործերից ղխաւորներն են.

1. Notes sur quelques faits de morphologie. Paris, 1809.
2. Notes sur la conjugation arménienne. Note sur le mot *սեւորիւն*. Paris, 1900.
3. Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique. Paris, 1901.
4. Etimologie Arménienne. Paris, 1904.
5. Observations sur le graphie, - quelques anciens manuscrits de l'Evangile Arménienne. Paris, 1904.
6. Auguste Carrière (1838-1902). Paris, 1902.
7. Alt Armenischer Elementar - Buch, Լ. Կլիգ, 1903.

Բազմաթիւ յօդածներ է տպագրել նաեւ Journal Asiatique-ի, «Բանասէր»-ի, «Հանդէս Ամսօրեայ»-ի եւ իր նախաձեռնութեամբ Փարիզ հրատարակող Revue des Etudes Arméniennes - ի մէջ: